Մրցույթ՝ «ՀՀ Գեղարքունիքի մարզի Դդմաշեն գյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի <<Հայոց լեզու և գրականություն>>- (6 դասաժամ), <<Երգ երաժշտություն>>(3 դասաժամ) և <<Կերպարվեստ>>-(3 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:
-հաստատությունից դուրս մնացած լինելու՝ կամավոր ատեստավորումից 60- ավելի տոկոս ցուցաբերած լինելու մասին տեղեկություն

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են **2024 թվականի հոկտեմբերի 15-ից մինչև 2024 թվականի հոկտեմբերի 28-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:**

<<Հայոց լեզու և գրականություն>>, <<Կերպարվեստ>> և <<Երաժշտություն>> առարկաների մրցույթը տեղի կունենա 2024 թվականի հոկտեմբերի 31-ին՝ ժամը 14:00-ին <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Դդմաշեն գյուղի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ում, հասցե՝ գյուղ Դդմաշեն 1 փողոց, շենք 38:

Տեղեկությունների համար զանգահարել 094-53-40-87 հեռախոսահամարով: